ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/40891-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Գնահատման գործունեության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1173-21.10.2025-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Բավարար հստակություն ապահովելու նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Գնահատման գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետում առկա են մեկից ավելի «եւ» շաղկապներ՝ առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «1) 2-րդ մասի 7-րդ կետում «եւ գնահատողների» բառերը փոխարինել «, գնահատողների եւ ծառայություններ մատուցողների» բառերով.»:

2. Բավարար հստակություն ապահովելու նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը՝ առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում Կադաստրի կոմիտեն համապատասխան ենթաօրենսդրական ակտը համապատասխանեցնում է սույն օրենքին:»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ